ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ
ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԻՄՆԱԴՐԱՄ

ARMENIAN NATIONAL
AGRARIAN UNIVERSITY

FOUNDATION

ՀՀ, Երևան, 0009, Տերյան 74
Հեռ.՝ (+374 10) 58 19 12
Էլ. փոստ՝ info@anau.am
www.anau.am

74 Teryan Str., 0009, Yerevan, RA
Tel: (+374 10) 58 19 12
E-mail: info@anau.am
www.anau.am

26 » 12 2024թ.

№ 11/12

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՌԵԿՏՈՐԻ Պ/Կ-Ի ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՄԱՍՆԱԿԻՑ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 2-րդ մասով և հիմք ընդունելով ՀԱԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/155 ծածկագրով գնման ընթացակարգի պատախանատու ստորաբաժանման ղեկավարի 2024 թվականի դեկտեմբերի 24-ի զեկուցագիրը՝

ՊԱՐԶԵՑԻ

1. **<u>Պատախանատու ստորաբաժանման ղեկավարի ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

Պատախանատու ստորաբաժանման ղեկավարը «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի Ռեկտորի պ/կ-ին (այսուհետ՝ Պատվիրատուի ղեկավար) ուղղված 2024 թվականի դեկտեմբերի 24-ի զեկուցագրով հայտնել է հետևյալը.

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի կարիքների համար կահույքի ձեռքբերման ՀԱԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/155 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) շրջանակներում հաղթող մասնակից է ճանաչվել «ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ-ն (ՀՎՀՀ՝ 02910767, գործունեության հասցե՝ ՀՀ, ք. Երևան,Նալբանդյան փող 25/14$_2$ 76բն, հեռ.՝ +374041072007, էլ-հասցե՝ creative.business1920@gmail.com):

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի կողմից անգործության ժամկետը լրանալուն հաջորդող 4-րդ աշխատանքային օրը՝ 29.11.2024թ, «ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ-ին՝ Eauction համակարգի միջոցով ծանուցվել է պայմանագիր կնքելու առաջարկը:

Հանձնաժողովը արձանագրել է, որ «ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում՝ ոչ ուշ, քան 06.12.2024թ. ներառյալ, գրավոր չի ներկայացրել

Պայմանագրի և որակավորման ապահովումները, և վերջիններս ներկայացնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև սահմանված ժամկետում և կարգով՝ eauction համակարգում չի կցել իր կողմից հաստատված պայմանագիրը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը «ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ-ի հայտը 8-րդ, 11-րդ և 15-րդ չափաբաժինների մասով մերժել է, գնահատել է անբավարար և «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված պահանջները կիրառելու նպատակով «ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ-ի հայտը մերժելու վերաբերյալ տեղեկատվությունը որոշել է ներկայացնել «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի Ռեկտորի պ/կ-ին:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները՝ առաջարկվել է «ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով կայացնել պատճառաբանված որոշում և հիշյալ որոշումը գրավոր ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարություն:

2. <u>Գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի կարիքների համար 2024թ. հոկտեմբերի 22-ին հայտարարված Կահույքի ձեռքբերման նպատակով ՀԱԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/155 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) շրջանակներում 8-րդ, 11-րդ և 15-րդ չափաբաժինների մասով, որպես ընտրված (հաղթող) մասնակից է ճանաչվել «ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ-ն (ՀՎՀՀ՝ 02910767, գործունեության հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան փող 25/14շ 76բն, հեռ.՝ +374041072007, էլ-հասցե՝ creative.business1920@gmail.com):

2. «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի կողմից անգործության ժամկետը լրանալուն հաջորդող 4-րդ աշխատանքային օրը՝ 29.11.2024թ, «ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ-ին Eauction համակարգի միջոցով ծանուցվել է պայմանագիր կնքելու առաջարկը:

3. Հանձնաժողովը արձանագրել է, որ «ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում՝ ոչ ուշ, քան 06.12.2024թ ներառյալ, գրավոր չի ներկայացրել Պայմանագրի և որակավորման ապահովումները, և վերջիններս ներկայացնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև սահմանված ժամկետում և կարգով՝ eauction համակարգում չի կցել իր կողմից հաստատված պայմանագիրը:

4. Գնահատող հանձնաժողովը որոշել է «ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ-ի հայտը մերժել, գնահատել անբավարար և «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված պահանջները կիրառելու նպատակով «ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ-ի հայտը մերժելու վերաբերյալ տեղեկատվությունը որոշել է ներկայացնել «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի Ռեկտորի պ/կ-ին:

3. <u>Պատվիրատուի ղեկավարի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Պատվիրատուի ղեկավարը՝ «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի Ռեկտորի պ/կ Հ. Զաքոյանս, ուսումնասիրելով Պատախանատու ստորաբաժանման ղեկավարի կողմից 2024 թվականի դեկտեմբերի 24-ին ներկայացված զեկուցագիրը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած **պարտավորությունը, որը հանգեցրել է** պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ **գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը** և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակը, այդ թվում՝ ռուսերեն, վարում և հրապարակում է լիազորված մարմինը: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա: **Սույն մասում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու** կամ կնքված պայմանագրի **վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու** կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու **օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին:** Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել: Մասնակիցը նշված ցուցակում ընդգրկվում է ներառվելու օրվան հաջորդող օրվանից երկու տարի ժամկետով:

Կարգի 41-րդ կետի համաձայն, եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված

փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն, եթե Կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, Հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Այսպես. «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի կարիքների համար Կահույքի ձեռքբերման ՀԱԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/155 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) շրջանակներում, որպես ընտրված (հաղթող) մասնակից է ճանաչվել «ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ-ն (ՀՎՀՀ՝ 02910767, գործունեության հասցե՝ ք.Երևան, Նալբանդյան փող 25/14$_2$ 76բն, հեռ.՝ +374041072007, էլ-հասցե՝ creative.business1920@gmail.com):

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի կողմից անգործության ժամկետը լրանալուն հաջորդող 4-րդ աշխատանքային օրը՝ 29.11.2024թ-ին, «ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ-ին՝ Eauction համակարգի միջոցով ծանուցվել է պայմանագիր կնքելու առաջարկը:

12.12.2024թ Հանձնաժողովը արձանագրել է, որ «ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում՝ ոչ ուշ, քան 06.12.2024թ ներառյալ, գրավոր չի ներկայացրել Պայմանագրի և որակավորման ապահովումները, և վերջիններս ներկայացնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև սահմանված ժամկետում և կարգով՝ eauction համակարգում չի կցել իր կողմից հաստատված պայմանագիրը:

Գնահատող հանձնաժողովը որոշել է «ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

Ուսումնասիրելով հիմքերը, դրանք համադրելով առկա ապացույցների հետ՝ արձանագրում եմ, որ «ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ-ն թույլ է տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, քանի որ խախտել է **գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:**

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն ՀՀ ֆինանսների նախարարությունը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում Պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն Մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է ներառվելու օրվան հաջորդող օրվանից երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Պատախանատու ստորաբաժանման ղեկավարի կողմից ներկայացրած հիմքերը՝ «ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցողների ցուցակում ներառելու համար, ***գնահատել բավարար***:
2. «ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ-ի ներքոնշյալ տվյալները համապատասխան հիմքերով գրավոր ուղարկել լիազորված մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը, «ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով.

Մասնակցի						
Անվանումը	ՀՎՀՀ/ ֆիզ. անձի դեպքում հանրային ծառայության համարանիշը	գործունեության հասցեն	գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը			ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը
			խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը	խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը	որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից	
«ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ	ՀՎՀՀ 02910767	ք.Երևան,Նալբանդյան փող 25/142 76բն			X	26.12.2024թ. ՀԱԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/155

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվան հաջորդող օրը:

ՌԵԿՏՈՐԻ Պ/Կ՝ **Հ. ԶԱՔՈՅԱՆ**